ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2012 թվական N 9

ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿՐԳԸ, 2012Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ , ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ,ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 8-րդ կետերով և 31-րդ հոդվածով

Որոշում է հաստատել Երասխ գյուղի՝ ավագանու կանոնակարգը, 2012թ-ի բյուջեի հաշվետվությանը, համայնքի ղեկավարի , աշխատողների վարձատվության չափերը և համայնքի զարգացման քառամյա ծրագիրը՝ ըստ հավելվածների 1-ի, 2-ի, 3-ի և 4-ի

Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՐԳ ԵՐԱՍԽԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ARARAT ERASXI GYUGAPETARAN 04101167

Գյուղապետ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ

Հավելված 1

Երասխ գյուղական համայնքի ավագանու

2012թվականի նոյեմբերի 27 N 9 որոշման

ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝8

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքի միավորը	Պաշտոնային Դրույքաչափը (ՀՀ Դրամ)
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ		156.400

Համայնքային ծառայության պաշտոններ

Աշխատակազմի քարտուղար	1	114.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ	2	110.000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	85.000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	74.000

Տեխսպասարկման անձնակազմ

Պահակ	1	66.000
Հավաքարար	1	51.000

Երասխի գյուղապետ Ռ.ՕՂԻԿՅԱՆ

Հավելված 2

Երասխ գյուղական համայնքի ավագանու

2012թվականի նոյեմբերի 27 N 9 որոշման

ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը եւ անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր:

Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:

Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ եւ ուղերձներ:

Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին կամ պետական այլ մարմիններին:

Պետական մարմինները կամ համայնքի ղեկավարն ավագանու ընդունած ուղերձն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր են քննության առնել եւ արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացնել ավագանուն:

Երասխի գյուղապետ՝ Ռ.ՕՂԻԿՅԱՆ

Հավելված 3

Երասխ գյուղական համայնքի ավագանու

2012թվականի նոյեմբերի 27 N 9 որոշման

2012Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄՆԱՑՈՐԴ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

	նախատեսված	կատարված
Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ	8.300.00	7.763.26
Պարգևատրումներ խրախուսանքներ	300.00	250.00
Սոցիալական պաշտպանություն	2.000.00	2.000.00
էլէկտրաէներգիա	500.0	500.0
Կապի ծառայություն	70.0	46.60
Ապահովագրական ծախսեր	41.00	41.00
Ներքին գործուղում	200.0	200.0
Համակարգչային ծառայություն	100.0	100.0
Կեղեկատվական ծառայություն	60.00	35.00
Գրասենյակային նյութեր և հագուստ	200.00	200.00
Տրանսպորտային նյութեր	500.00	500.00
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	100.00	100.00
Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում	1000.00	0.00
Վարչական սարքավորումներ	365.80	365.80
Պարտադիր վճարներ	42.70	42.70
Աղբահանություն	500.00	500.00
Հուղարկավորության նպաստներ	200.00	150.00

Երասխի գյուղապետ՝ Ռ.ՕՂԻԿՅԱՆ

Հավելված 4

Երասխ գյուղական համայնքի ավագանու

2012թվականի նոյեմբերի 27 N 9 որոշման

ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂԻ 2012-2016թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երասխավան/ նախկինում՝ Արազդայան/ վերանվանվել է 1968 թվականից:
1940-ական թվականներին կառուցվել է 15 առանձնատներ կայարանամերձ տարածքում կայարանի աշխատողների համար:
Գյուղի տերիտորիայի ստորգետնյա ջրերի մակարդակը բավականին բարձր է՝ որոշ տեղերում 0.30-0.50 մետր գետնի մակերևույթից:
Շատ են ճահճուտները, որի պատճառով ստեղծված հակասանիտարական պայմանները հաշվի առնելով, հետագայում գյուղը կառուցվել է երևան-Նախիջևան մայրուղու արևելյան կողմում, որտեղ ցածր է նաև ստորգետնյա ջրերի մակարդակը,տարածությունը՝ 2136 հա,բնակչությունը՝ 923:
Գյուղի հեռավորությունը մարզկենտրոնից 35 կմ է: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 800 մետր բարձրության վրա, դեմ-դիմաց Արարատ լեռան, դեմ-դիմաց թուրք օմոնականների որջի:
Հայաստանի Հանրապետության հարավային դարպասն է,հարևանությամբ Նախիջևանի, Իրանի և Թուրքիայի, հեռավորությունը 1-5 կմ:
Գյուղի կլիման ծմեռը ցրտաշունչ է, ամառը՝ շոգ,որի պատճառով այդ ամիսներին գյուղում տարածվում է մալարիան, որի վարակի աղբյուրը մոծակներն են:
Վարակը հիմնականում փոխանցվում է առողջ մարդուն անոֆելես ցեղին պատկանող մոծակի միջոցով:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 923 բնակիչներ,
Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է

1. Երեխաներ /0-6 տ./-86
2. Դպրոցականներ /7-17/-114
3. 18-63 տարեկան -612
4. 63 և ավելի- 63
5. Թոշակառուներ- 81
6. Հաշմանդամներ -11
7. Աշխատունակներ-525
8. Փախստականներ-50 ընտ. 148
9. Գործազուրկներ -182
10. Ընտանիքներ /ծխերի/ թիվը-220
11. Գրանցվածներ 'փարոս' ընտանեկան նպաստների համակարգում-75

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ կողմից, որը ընտրվուն է չորս տարին մեկ անգամ; Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Աշխատակազմի քարտուղար	-1 հաստիք
Գլխավոր հաշվապահ	-1 հաստիք
Գանձապահ,օպերատոր	-1 հաստիք
Գյուղ գծով մասնագետ	- 1 հաստիք
Հավաքարար	-1 հաստիք

Պահակ	-1 հաստիք
Սանտեխնիկ	-1 հաստիք
Վարորդ	-1 հաստիք

ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանավար	-1 հաստիք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 10 հոգուց;
Համայնքի ավագանու անդամների թիվը 5:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14-03-1997թ. Թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով.

Վարչական շենք /կիսակառույց/	-1 հատ
Ներհամայնքային նշանակության ճանապարհներ և փողոցներ	-7 կմ
Կամուրջներ	-5 հատ
Գերեզմանատուն	-4 հա

1970-ական թվականներին կառուցված 7 կմ ներհամայնքային տեղնիկական կարիքների համար օգտագործվող ջրագիծը, որը ծառայում էր արտիզան ջրով տնամերձ հողամասերը ոռոգելու նպատակով՝ ամբողջությամբ փթել է և կարիք ունի հիմնովին փոխարինման:

Անմխիթար վիճակում է գյուղամիջյան ճանապարհները, առավել ևս դպրոց տանող ճանապարհները, որի վերանորոգումը դպրոցահասակ երեխաների փրկությունն է;

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղում աղբահանությունը կատարվում է անհատական ձևով 60-70%-ով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 160 առանձնատուն 7338 քառ. մ տարածքով, 14 մասնավոր շենք:
Բանակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը 70-ից ավել է, որը աճում է տարեց-տարի:
Կան 8 կիսակառույց շենքեր, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն շարունակվել:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը -2135,0
Որից՝

Վարելահողեր	-492,1 հա
Խոտհարք	-320,0 հա
Արոտավայրեր	-245,0 հա
Անօգտագործելի հողեր	-851,0 հա
Բնակավայրեր	-24,5 հա
Ջրային տարածք	-18,0 հա

Ավազի հանք	-2,0 հա
Գերեզմանոց	-4,0 հա
Տնամերձ հողեր	-27,0 հա
Արտադրական նշանակության հողեր	-36,7 հա
Սեփականաշնորհված հողեր	-230 հա
Համայնքի սեփականության հողեր	-1872,0 հա

Գ Յ ՈՒ Ղ Ա Տ Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ոռոգման ջրի վարձավճարի թանկության և ոռոգվող հողերի ավազյան լինելու պատճառով ջրի կորուստը կազմում է 60-70%, որի պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղմթերքների արտադրությունը:Գյուղացին հիմնականում զբաղվում է բանջարա-բոստանային կուլտուրաների մշակությամբ,որտեղ ևս շատ կան խնդիրներ՝ տնամերձ հողամասերի ոռոգման հետ կապված: Անասնապահությամբ զբաղվողները ուրախանում են,որ անասուն ունեն, տխրում են, որ եկամուտ չեն ստանում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղն ունի միջնակարգ դպրոց, ուր սովորում են 127 աշակերտներ,:Դպրոցը չունի խմելու ջուր, յուրաքանչյուր երեխա իր հետ դպրոց է տանում իր խմելու ջուրը:
2. Համայնքը չունի մսուր – մանկապարտեզի, մշակույթի տան՝ շենքային պայմաններ :

ՄՇԱԿՈՒՅԹ. ՍՊՈՐՏ. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն չունի մշակույթի տուն գրադարան, իսկ գործող գրադարանը գտնվում է եռահարկ շենքի սեփական տան՝ բնակելի սենյակում, կա 3820 կտոր գրականություն, 20-30 ընթերցող:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի Բուժ կետի շենքային պայմաններ սակայն ունի գործող բուժկետ, որը գտնվում է համայնքի բնակչի սեփական տանը : Կան առաջին օգնության դեղամիջոցներ, սակայն չկան հիվանդների այսօրվա հիվանդությունները կանխելու կամ ստուգելու հնարավորություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ամենաուժեղ կողմը՝ բնակչության հայրենասիրությունն է, որի շնորհիվ քչերին է տրված:
1988-1994 թթ. Պատերազմական տարիներին. Թուրք օմոնականանների միակ նպատակն էր ծանր հրետանու արկերով քարուքանդ անել գյուղը, սակայն գյուղի բնակչության և հայ ազգի նվիրյալ զավակների կողմից ցուցաբերած վճռականությամբ և քաջությամբ բավարավեց հաղթանակը:
-Մարդը ծնվում է ապրելու, սիրելու համար, թող չզրկվի դրանից , և չգնդակահարեն նրա ամենամեծ իրավունքը՝ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ:
Համայնքի ուժեղ կողմերից է՝ գյուղի սահմանամերձ լինելը, Երևան-Սյունիք մայրուղու գոյությունը, որն անցնում է համայնքի միջով;Երևան-Երասխավան երկաթգծի գոյությունը և երկաթգծի կայարանը: Համայնքի վարչական տարածքում է գտնվում Երասխի հանքային ջրերի, գինու գործարանը և մի շարք այլ շենքեր ու շինություններ, որոնք կարող են նպաստել հետագայում համայնքի զարգացմանը:
Լեռնային Արցախի խնդրի կարգավորումից հետո Հայ-ադրբեջանական սահմանի վրա հնարավոր է կառուցել շուկա, դառնալ մարզի առևտրական կենտրոնը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ՝

Քարուքանդ եղած գյուղամիջյան շուրջ 7 կմ ճանապարհը, չլուսավորվող փողոցներ, անջրդի տնամերձ

հողամասեր,աշխատատեղերի բացակայություն,բնակչության արտահոսք:
Այժմ գյուղի սոցիալական վիճակը շատ անկայուն է, պատերազմական գործողությունների ընթացքում գյուղացին կրել է ահավոր վնասներ, թե գյուղատնտեսության և թե անասնապահության բնագավառում:
Այդ ընթացքում 50 ընտանիքներ լքեցին գյուղը՝ դուրս գալով հանրապետության սահմանից:
Օրըստօրե աճում է բնակչության թվի նվազում, երիտասարդության արտահոսք, ծնողաբերության մակարդակի անկում:
Ծանր է հիվանդ և բազմանդամ ընտանիքների, փախստականների, թոշակառուների, միայնակ մայրերի սոցիալական վիճակը, որոնք չեն աշխատում, շատերը չեն օգտվում 'Փարոս' համակարգից:

Մի խոսքով համայնքի թույլ կողմերն են.

Սոցիալապես անապահով խավի բարձր տոկոսը:
Գործազրկությունը:
Համայնքի ավազային հողերը, ջրի կորուստը:
Ոռոգման ջրի սակագնի թանկությունը:
Երիտասարդությոան արտահոսքը
Ծնողաբերության մակարդակի անկումը
Գյուղամիջյան ճանապարհների անմխիթար և անլույս վիճակը
Տնամերձ հողամասերի անջրելիությունը
Բուսականության բացակայությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքն ունի մեծ թվով աշխատուժ, սակայն չկան աշխատատեղեր: Գյուղի սահմանամերձ լինելը բերում է շատ հոգսեր, որոնք կամա թե ակամա բնակչությանը տանում են սննանկացման:
Մեր պայմաններում ոռոգման ջուրը հարստություն չէ, քանի որ համայնքը զուրկ է ծառերից, բուսականությունից և ապրելով գյուղում չես կարողում մշակել տնամերձ հողակտոր, բանջարաբոստանային կուլտուրա աճեցնելով՝ ընտանիքի հոգսը, որոշ չափ թեթևացնել:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող առաջնահերթ վտանգներն են.

- Ֆիզիկական անձերից հարկերի և վարձավճարների գանձումը
- Ոռոգման ջրի սակագնի թանկությունը
- Տնամերձ հողամասերի անմշակելիությունը
- Բնակչության արտահոսքը

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարություն.

Մեր համայնքում գյուղատնտեսության և անասնապահության զարգացումը եկամտաբեր չեն : Հողերը քարքարոտ են, ավազային, ջրի կորուստը մեծ, դա Վեղի ներքին Արփա գոտում: Իսկ Մերձարաքսյան գոտում գերխոնավ, աղուտներ և ճահճուտներ,անասնապահության զարգացման ոչ մի հեռանկար չկա, չկա նաև հեռազնաց արոտավայր, կաթնատվությունը շատ ցածր է: Գյուղում չկան նորմալ պայմաններ, որպեսզի արդյունավետ կազմակերպվի աշխատավորության հանգիստը:

Ավարտել գյուղապետարանի անավարտ տիպային շենքի երկրորդ հարկի ծածկն ու ներքին հարդարման աշխատանքները:

Առաջիկա 4 տարում համայնքի հիմնական նպատակներն են.

Գյուղապետարանի կիսակառույց տիպային շենքի կառուցում և ավարտում
Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
Գյուղի գազաֆիկացում.
Մսուր մանկապարտեզի հիմնում
Դպրոցի քանդված կորպուսի վերանորոգում՝ շահագործում
Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն
Հորքային նասոսի շահագործում
Տնամերձ հողամասերի համար ոռոգման ջրագծերի, հիմնովին վերանորոգում

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական աղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 40 տարվա վաղեմություն ունեցող /տնամերձ հողերի ոռոգման նպատակով օգտագործվող/ ջրագիծը:
Նաև պետք է հաշվի առնել այն հանգամանքները, որ համայնքի տարածքը ամբողջապես աղուտներ են, ջրի մակարդակը բարձր, նման պայմաններում ջրախողովակի չփտելը բացառված է:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ Կառավարության ուշադրությունը և աջակցությունը, գործարարների, բարերարների ներդրումները՝ աշխատատեղերի ստեղծման նպատակով, Սահմանամերձ համայնքի բնակիչներին ցածր տոկոսադրույքներով և երկարաժամկետ վարկերի տրամադրումը, պայմանագրերի կնքումը Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90%-ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10%- համայնքային բյուջեից և համայնքի ներդրումներից, որի համար պետք է ավելացվի համայնքին տրվող դոտացիան:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով կիսակառույց գ/պ-ի շենքի շինարարական աշխատանքների ավարտման համար կպահանջվի 50 (հիսուն) միլիոն ՀՀ դրամ, որով կլուծվի գ/պ-ի, բուժկետի, գրադարանի շենքի հարցը:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՅՑՈՒՄ ԾՐԱԳՐՈՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքը չունի մսուր-մանկապարտեզի, գրադարանի, բուժ կետի, ակումբի, գյուղապետարանի շենքեր ու շինություններ:
Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ համայնքը չունի բնակչության աշխատանքից հետո, ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայր, համայնքի առաջնահերթ խնդիրը համարել.
Գյուղապետարանի կիսակառույց տիպային շենքի ավարտը, որի առաջին հարկում կտեղակայվի բուժ կետը, գրադարանը և դահլիճը՝ կօգտագործվի ավագանու նիստերի, միջոցառումներ անցկացնելու, բնակչության ազատ ժամերին բազմաբնույթ խաղերով զբաղվելու հանգստանալու համար իսկ երկրորդ հարկը, որպես գյուղապետարան:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են.
Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը.
Ավարտին հասցնել դպրոցի քանդված կորպուսի շինարարական աշխատանքները, որտեղ 1-ին հարկում կվերաբացվի մսուր մանկապարտեզը, կուլտուրայի տունը որտեղ տոնական օրերին կկազմակերպվի մասսայական միջոցառումներ և երեկույթներ:
Ակումբն օգտագործել նաև շախմատի, նարդու և այլ սպորտային խաղերի համար

Բուժ.կետում կազմակերպել բնակչության առաջին բուժ. օգնություն:

ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Ստանալ ՀՀ Կառավարության կողմից ֆինանսական աջակցություն: Ձեռք բերել ՀՄՆՀ-ի համաձայնությունը պահանջվող գումարը հատկացնելու համար:

Ավարտին հասցնել գյուղապետարանի տիպային կիսակառույց շենքը:

Մսուր-մանկապարտեզի,մշակույթի տան շենքային հարցերը.

Այդ աշխատանքներն սկսել և ավարտել 2012-2016թթ. ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 6-7 կմ:
Գյուղամիջյան 6 փողոցներից ոչ մեկը ասֆալտապատ չէ:
Ընդառաջելով բնակչության խնդրանքներին սույն ծրագրով առաջարկվում է.
Բարեկարգել, լուսավորել փողոցները
Ասֆալտապատել գյուղի դպրոց գնացող ճանապարհը :

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է.

Վերացնել գյուղամիջյան փողոցների ջրափոսերը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ Կառավարության աջակցություն ,Համագործակցել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ, կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը:

Կատարել Գյուղամիջյան փողոցների խիճապատում, ապագայում ասֆալտապատելու ակնկալիքով և փողոցների լուսավորություն:

Աշխատանքները կատարել 4 տարվա ընթացքում:

Երասխի գյուղապետ՝ Ռ.ՕՂԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՍՀ ԱՐԱՐԱՏ ԵՐԱՍԽԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ · РА МАРЗ АРАРАТ ЕРАСХИ ГЮХАПЕТАРАН · 04101167 · ՀԱ